

## ԽՕՍՔ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻ

Կ'ողջունենք Հայկազեան Համալսարանական Հանդեսին այս ԺԵ հատորը՝ ձօնաժամ Մեծ Եղեռնի ութսունամեակին: Վստահ ենք, որ այս հատորով Հայկազեան Համալսարանական Գոլէճը կ'աւելցնէ նոր քար մը Եղեռնի պատմական կոթողին վրայ:

1995-ը Հայկազեան Համալսարանական Գոլէճի հիմնադրութեան քառասնամեայ տարեդարձն է: Այս առիթով՝ Համալսարանիս Հոգաբարձութիւնը կը շնորհատրէ բոլոր տեսիլքի տէր հիմնադիրները, հոգաբարձուները եւ տնօրէնները, դասախօսները, ուսուցչապետերը, պաշտօնեաները եւ աշակերտութիւնը, որոնք, քառասուն տարիներու ընթացքին, Աստուծոյ շնորհքով ծրագրեցին, հաստատեցին, կերտեցին եւ ծով դժուարութիւններու մէջէն առաջնորդեցին Համալսարանին նաւակը մինչեւ եզրերը քսանմէկերորդ դարուն:

Յարգա՛նք բոլոր անոնց՝ որոնք հաւատարիմ մնացին Համալսարանին առաքելութեան, որ կը նպատակադրէ հայեցի եւ քրիստոնէական մթնոլորտի մէջ աւանդել գիտական բարձր կրթութիւն եւ պատրաստել գիտակից եւ կարող առաջնորդներ:

Հայ Աւետարանական Ծարժման հարիւրյիսունամեակի նախօրէին՝ Հայկազեան Համալսարանական Գոլէճը կը մնայ վկան մէկուկէս դարեայ դաստիարակչական փառատր անցեալի մը, որ իր թանկագին տեղը ունի հայ ազգի դաստիարակութեան պատմութեան մէջ:

Այսօր, Հայկազեանը, Սփիւռքի միա՛կ հայ համալսարանը, կը հանդիսանայ պսակը աւետարանական դաստիարակչական հաստատութիւններուն, եւ իր ծառայութիւնը անխտիր կը մատուցէ ընդհանրապէս Միջին Արեւելքի ժողովուրդին եւ ի մասնաւորի մեր հայ երիտասարդութեան:

Հայկազեան Համալսարանական Գոլէճի Հոգաբարձութեանս աղօթքն ու մաղթանքն են, որ այս քառասնամեակն ըլլայ անկիւնադարձ մը նոր իրագործումներու եւ նորանոր նուաճումներու՝ ի շահ մեր երիտասարդութեան եւ ի փառս Աստուծոյ:

Ի Դիմաց

Հայկազեան Համալսարանական Գոլէճի

Հոգաբարձութեան

Վեր. Ռոպէր Սարգիսեան

Պէյրութ, 24 Հոկտեմբեր 1995

## ON THE OCCASION OF THE 40TH ANNIVERSARY OF HAIGAZIAN UNIVERSITY COLLEGE

*The year 1995 represents a landmark in our history. It has been a year during which we have often been reminded of past tragic events; yet it is also a year that looks back to the long living tradition that came to us almost a century and a half ago through the Armenian Evangelical Movement; a century that looks forward to the new millenium through the educational and academic services of Haigazian University College that are rendered in the Christian spirit to the wide community of the Middle East.*

*On the occasion of the 40th anniversary of Haigazian University College, the University Board of Managers would like to congratulate all those who have made it possible to translate the ideas and visions of the founders into reality and would not abandon the fledgling school during troubled times. Our thanks go to the founders, those dedicated men and women with a vision; to the managers and presidents and deans; to the instructors and lecturers and professors; to the staff; to the students.*

*Our university has survived hard times. Today Haigazian University College is the only Armenian university in the diaspora. It is the devout wish of the Board of Managers that the university will continue to be a guide to our Armenian youth and all the other young people of the community in their search for education and truth.*

*In the same spirit University College provides a forum for free exchange of academic discourse through its publication. We are looking forward to Volume 15 of the **Haigazian Armenological Review** which commemorates the 80th anniversary of the Armenian Genocide.*

*Beirut, October 24, 1995*

*Rev. Robert Sarkissian  
Chairman of the HUC  
Board of Managers*